№ 35 Մարտի 1 Երեքշաբթի 1883 Մարտի 1 Երեքշաբթի № 35

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խաչագողի յիշատակարան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Փետրվարի 23-ին

Տարիներով սպասած ակնկալութիւնները մինը վերջապէս կատարվեցաւ,—Ախալցխայի հայ հասարակութիւնը բաղդ ունեցաւ այս տարի թատերական երեք ներկայացումների հանդիսատես լինելու. սիրողների խումբը կազմում էր մեր ուսումնարանաց ուսուցիչներն և վարժուհիք, առաջնորդութեամբ յարգելի տեսուչ պ. Ալիխանեանցի, որը մաքառելով ամեն խոչնդոտների դէմ, դրաւեց մեր հասարակութեան յարգանքը և համակրութիւնը։ Առաջին երկու անգամին ներկայացրին «Շուշանիկ» ողբերգութիւնը և «Երկուսս էլ քաղցած ենք» կատակերգութիւնը. իսկ վերջինը, որ ամսոյս 22-ին տեղի ունեցաւ զինուորական ժողովարանի դահլիճում էր «Արշակ Բ.» ողբերգութիւնը և «Դալալ Ղազո» վոդեվիլը։ Թէև հասարակութիւնը խրախուսեց մեր մանուկ դերասաններին իր ներկայութեամբ, թէև մենք համակրութեամբ վերաբերվում էինք այդ վսեմ գործին, այնու ամենայնիւ ցանկալի էր որ միշտ մի և նոյն քաղցր տպաւորութեան և գեղեցիկ տրամադրութեան տակ մնայինք, որ ապագայի համար տեղիք չը լինէր հասարակութեանս եռանդը և սէրը դէպի ազգային ներկայացումները թմրելու. ուստի կանխապէս ներողութիւն եմ խնդրում պ. պ. ուսուցիչներից իմ երկու նկատողութեանս համար. առաջին, թողնենք այն որ հիմայ պատմական ողբերգութիւններն այն նպատակին չեն ծառայում ինչ որ մեր կեանքից առնուած նոր պիէսաները, բայց գերերի անյարմար բաժանելը (ընդունակութեան և ձիրքի համեմատ) և նա մանաւանդ անգիր չը գիտենալները խլում էին բոլոր քաղցրութիւնը. և երկրորդ եսականութիւնից թէ ծայրահեղ համեստութիւնից վարակված, մեր սիրելի վարժապետները արժան չէին համարել հրաւիրելու մեր հին սիրողներից շնորհալի երիտասարդներին, որոնց երեքը միայն յիշեմ, պ. պ. Կոպազեանին, Բաբայեանցին և Զիֆտալարեանցին. բայց կրկին և կրկին անգամ ծափահարում եմ ընդհանրապէս մեր բոլոր ուսուցիչներին, յայտնելով անկեղծ շնորհակալութիւններս, և մասնաւորապէս բոլոր ներկայացումներին անհամեմատ ընդունակութիւն ցոյց տուող պ. Աւագեանցին, որի շնորհալի խաղը հիացրեց ամենքին։ Երեք անգամին էլ խաղացին յօգուտ Կարապետեան ուսումնարանի զրաղարանին և երեի զուտ արդիւնք կունենային մօտաւորապէս մինչև չորս հարիւր ռուբլի։

Քաղաքիս առևտուրը (ինչպէս շատ տեղերում) ընկած է. հասարակութիւնը իր փորացաւով է զբաղված, թէև մթերքները՝ համեմատելով անցեալ տարիների հետ արժան են. մի փոքրիկ յաջողութեան յոյս էինք մտածում այս տարի Ախալցիսայում զօրաժողով լինելուց, նա էլ ցնդվում է քաղաքային վարչութեան մեղուկի մանկութեան պատճառով. ինչպէս խօսում են, սորա հետևանքը լինելու է գաղթականութիւնը, եթէ մի նոր արև չը ծագէ մեր վրա. այդ է պատճառը որ մեղանում սրիկաները աւելանում են, և գողութիւններ երբեմն պատահում են, որոնք և վերաբերում եմ գիշերապահների պարապանցութեանը։ Զմեռը մեղանում մեղմ էր, ձիւն շատ քիչ տեղաց, այժմը օդը գարնանային է. մի բան էլ այս տարի առատ է մեղանում, դա աղքատների և քահանայացուների թիւն է. վախճանվողների տեղը անմիջապէս բռնում է նորը. արժան և անարժանը փնտռելը մեր գործը չէ, թող ձեռնադրողը երաշխաւորվի. բայց աղքատների պատսպարելը, կերակրելը աղքատ ժողովրդի չնչին է։ Վերջացնեմ նամակս մի նոր անհաւատալի աւանդով,—խօսում են «Աղքատաց հոգարարձութիւն» անունով նոր ընկերութիւն մը կազմելու մասին... «քաղցածի երազումը քիչմիչով փլաւ»։

Աբ. Աս.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Փետրվարի 21-ին

«Մեղուի» № 12-ի մէջ Ալէքսանդրապօլից մի նամակ էր տպված իմ դէմ։ Ես այդ նամակին չը պէտք է պատասխանէի, եթէ «Մեղուի» խմբագիրը ինձ առիթ չը տար այդ անելու։ Ահա թէ բանն ինչումն է։

Այս տարի յունվարի 1-ին ես մի նամակ գրեցի «Մշակին», որի մէջ շնորհաւորել էի «Մշակի» նոր տարին և ցանկացել էի նրան և նրա պ. խմբագրին երկար կեանք և աջողութիւն։ Որովհետև ես համակրում եմ «Մշակի» ուղղութեանը, որովհետև ես համոզված եմ, որ «Մշակը» մի ուրախալի երևոյթ է մեր գրականութեան մէջ, իբրև ներկայումս միակ առաջադէմ և ազատամիտ լրագիր, ուստի շատ բնական է, որ ես իրաւունք ունէի գրել նրան մի այնպիսի շնորհաւորական նամակ։ Սակայն «Մեղուի» աշխատակիցը աշխատում է խլել իմ ձեռից այդ իրաւունքը։ Նա ուզում է բարոյապէս հարստահարել ինձ։ Նա ասում է. «մի բէալական դպրոցի ստորին դասարանի անընդունակ աշակերտ, մի 14—15 տարեկան երեխայ չէ կարող ըմբռնել մի լրագրի ուղղութիւնը և նրատած Թիֆլիսում, իրաւունք չունի Ալէքսանդրապօլի երիտասարդութեան կողմից ուղերձներ կարդալ «Մշակին»։

Երևի պարոնի կարծիքով միայն հասակաւոր մարդիկը իրաւունք ունեն բերան բանալ և մի բանի վրա կարծիք յայտնել, իսկ ինձ նման 14—15 տարեկան (այն ինչ ես այս րոպէիս 19 տարեկան եմ) երեխաները զուրկ են մի բանի վրա կարծիք յայտնելու, դատողութիւն տալու իրաւունքից։ Սրանից դուրս է գալիս, որ պարոնի լոգիկայով փոքրը մեծի դէմ իրաւունք չունի խօսելու, որովհետև փոքրը միշտ սխալ է, իսկ նրանից մի քանի տարով մեծը միշտ նրանից ուղիղ է։ Հիանալի դատողութիւն... Երևի նոյն իսկ այդ լոգիկայով պարոնը կարծում է որ «Մշակը» միշտ սխալվում է «Մեղուի» դէմ, որովհետև «Մշակը» հասակով փոքր է «Մեղուից»։

Պարոնը ասում է, որ ես բէալական դպրոցի ստորին դասարանների աշակերտ եմ։ Մէկը չը կայ հարցնող պարոնին թէ, պարոն, ձեր ինչ գործն է թէ ես ո՞ր ուսումնարանի և ո՞ր դասարանի աշակերտ եմ։ Չը լինի պարոնի կարծիքով ստորին դասարանի աշակերտ լինելը մի ամօթ բան է... Պարոն, դուք ինչ գործ ունէք իմ արհեստի, իմ պարապմունքի հետ, դրանով ուզում էք ինձ վրա ստուեր գցել ինչ է... բայց խնդրեմ ասացէք, պարոն, դուք ո՞րտեղից գիտէք թէ ես ստորին դասարանի, այն էլ անընդունակ աշակերտ եմ, ինչից էք եզրակացնում իմ անընդունակ լինելը։ Պարոն, դուք սուտ էք խօսում և դրա համար չէք համարձակվում ձեր նամակի տակը ստորագրել։

Շարունակեմ։ Պարոն նամակագիրը ասում է, որ իբր թէ ես Թիֆլիսում նստած, Ալէքսանդրապօլի երիտասարդութեան կողմից ուղերձներ եմ կարդում «Մշակին»։ Իսկ ես ասում եմ, որ պարոնը Ալէքսանդրապօլում նստած, Թիֆլիս երազ է տեսնում... պարոնի հեռադիտակը այնքան թափանցիկ է և այնքան հեռու է ցոյց տալիս, որ

ԽԱՉԱԳՈՂԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Երրորդ մաս

—

Ա.

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Մի քանի րոպէից յետոյ սայլակը պատրաստ էր։ Քաւոր Պետրոսը հրամայեց քշել դէպի խաչագողների բնակարանը։ Նա լուռ էր, ինչպէս առհասարակ լինում էր, երբ պատրաստվում էր ըսկսել մի նոր ձեռնարկութիւն։ Ես նոյնպէս լուռ էի, բայց ես ոչինչ ձեռնարկութեան մասին չէի մտածում. իմ միտքը զբաւել էր գեղեցիկ Նէնէն։

Խաչագողների բնակարանը ցերեկով բոլորովին ուրիշ տեսք ունէր։ Թաղնված պատատուկ բոյսերի մէջ, հովանաւորված դարևոր ծառերով, նա աւելի նմանում էր զաղանների որջին, որ գտնվում է ժայռերի խոռոչների մէջ։ Նրա շուրջը ընկած էին քարերի առագին բեկորներ, որոնք պոկվելով մերձակայ լեռնից, ցած էին գլորվել, բոլորովին մերկ թողնելով ծառերի արմատները։ Անծանօթ մարդը հաղիւ կարող էր դուշակել, թէ այդ գետնափոր որջի մէջ բնակվում էին մարդիկ։ Բայց ծուխը, այդ մարդկային բնակութեան աղդարար նշանը, միայն խուլ թփերի միջից մխացող ծուխը, յիշեցնում էր, թէ այդ ծառախիտ անտառների դարևոր լռութեան մէջ ես տիրում էր մարդու շունչը։

Բայց ինչ ծուխ էր այդ։ Ծուխը բարձրանում էր զանազան կէտերից։ Զորի մէջ զանազան տեղերում ինչ որ այրվում էր։ Եւ բարձրացած ծուխը, միախառնվելով, կազմում էր թանձր, թխադոյն մառախուղ ամբողջ ձորի վրա։—Այստեղ ածուխ էին պատրաստում։

Գիշերով ես տեսայ խաչագողներին թւով աւելի շատ. իսկ այժմ երեք հոգի միայն գտանք նրանց բնակարանում։ Նրանցից մէկը նստած կարկատում էր ջորիների փալանոներ և ձիաների մաշված սարքը, միւսը մանր աւազով մաքրում էր մի ժանգոտած հրացան, իսկ երրորդը դեռ քնած էր։

Խրճիթը ներսից բոլորովին նման էր ածխագործների տնակին, որ գտնվում է անտառների մէջ։ Այստեղ և այնտեղ ածած էին մրոտած տոպրակներ, փայտ կտրելու տապարներ, կրակ խառնելու երկաթեայ անթրոցներ, հող փորելու բահեր և այլն։ Ածուխի սև փոշին նստած էր թէ բնակիչների և թէ բնակարանի վրա։ Բոլորը, բոլորը համապատասխանում էր սև արհեստի սև պարապմունքին։

Եւ իրաւ, այդ մարդիկը ածխագործներ էին, կապալով վեր էին առել անտառի մի մասը, ածուխ էին պատրաստում։ Ծուվի ափի մօտ կանգնած էին նրանց մի քանի նաւակները, որոնք տանում էին ածուխը մերձակայ քաղաքներում վաճառելու համար։ Մի քանի խումբ ջորիներ տանում էին նոյն մթերքը ցամաքի ճանապարհով դէպի շրջակայ գիւղերը և փոքրիկ քաղաքները, կամ հասցնում էին մինչև ծովեզրը նաւակների մէջ դնելու համար։

Մեր անակնկալ յայտնութիւնը նախ խռովութիւն պատճառեց նրանց, բայց երբ մեզ ճանաչեցին, էլ չափ չը կար նրանց ուրախութեանը։ Քաւոր Պետրոսի մի քանի կախարդիչ խօսքերը բաւական եղան գրաւելու նրանց վստահութիւնը։ Եւ ահա նրանց մէկի ձայն տալովը խրճթի մի անկիւնում շարժվեցան մերկ յատակի վրա փռած ցամաք տերևները, տախտակամածից բարձրացաւ մի դռնակ և ստորերկրեայ վիրապի միջից դուրս եկաւ մի գլուխ։ Նա մի քննողական հայացք ձգելով մեզ վրա, դուրս եկաւ փոսից։ Նրանից յետոյ յայտնվեցաւ երկրորդը, երրորդը։ Այդ նորերի թէ հագուստի զանազան բծերից և թէ ձեռքերի ներկերից երևում էր, որ նրանք այն ստորերկրեայ վիրապի մէջ ինչ-որ ներկերով կամ գոյներով աշխատում էին։ Դրանք ածխագործներ չէին։

Նրանք ուրախութեամբ ընդունեցին քաւոր Պետրոսին, համբուրվեցան նրա հետ և խնդրեցին նստել։ Քաւոր Պետրոսը ներկայացրեց և ինձ, մի քանի կարմիր խօսքեր աւելացնելով իմ ընդունակութիւնների մասին։

Ինձ ճանաչեցին իմ հօր անունով, որովհետև ինձ տեսել էին շատ փոքր հասակում։

Դրանք իմ հայրենակիցներն էին։ Նրանց գըլխաւորը, որ կոչվում էր Նաղար, դարձաւ դէպի քաւոր Պետրոսը, հարցնելով.

—Մենք վաղուց սպասում էինք ձեզ, Պետրոս եղբայր, ինչու այդքան ուշացաք։

—Երկար պատմութիւն է, պատասխանեց քաւոր Պետրոսը,—այդ մասին յետոյ կը խօսենք։ Դուք այն ասեցէք, ինչպէս են ազերքը, լա՞ւ են, առողջ են։

—Լաւ են, բայց...

—Ի՞նչ է պատահել։

Նաղարը պատմեց, թէ իրանց ընկերներից մէկը մի յանձնարարութեամբ ուղարկված էր մի տեղ, հիմա նա անհետացել է, և նրա մասին խիստ անհանգիստ են։

Այդ պատմութեան միջոցին քաւոր Պետրոսը նայեց իմ երեսին, որ տեսնէ իմ դէմքի արտայայտութիւնը։ Իմ մէջ ոչինչ խռովութեան նշան չը դտաւ։ Պատմութիւնը Նէնէին սպանելու յանձնարարութեամբ ուղարկված աւազակի մասին էր, որ հոգին տուեց իմ տապարի հարուածների տակ։ Բայց ես նրա մարմինը մի այնպիսի տեղում էի ամփոփել, որ ինքը սատանան չէր կարող գտնել։

Քաւոր Պետրոսը իրան ձեւացրեց որպէս սաստիկ հետաքրքրված։ Խաչագողի ընկերի անհետանալը, իրաւ որ, սաստիկ անհանգստութիւն էր պատճառում մնացածներին։

—Ո՞վ էր, ինչ յանձնարարութեամբ և ո՞րտեղ էր ուղարկված։

Նաղարը պատմեց, թէ նրան տուել էին մի աղջիկ, որ տանէ, անտառում «անհետացնէ», բայց աղջկայ հետ ինքն էլ անհետացաւ։

—Աղջիկը գեղեցիկ էր, հարցրեց քաւոր Պետրոսը։

—Գեղեցիկ էր։

—Իսկ տղան երիտասարդ էր։

—Երիտասարդ էր։

—Այսպիսի գործը երիտասարդին չեն յանձնում, շատ հասկանալի է, որ երկուսն էլ հաշտվել են միմեանց հետ և հեռացել են ով գիտէ որտեղ։

—Մենք արդէն մարդիկ ուղարկեցինք նրանց որոնելու, պատասխանեց Նաղարը։

—Ի զուր, պէտք էր նրանց թողնել իրանց քէֆին, ինչ որ ուզում են, թող անեն։

—Ի զուր, պէտք էր նրանց թողնել իրանց քէֆին, ինչ որ ուզում են, թող անեն։

Նաղարը ասաց, կան ուրիշ պատճառներ, որ այդ անցքը խիստ վտանգաւոր են դարձնում, և խոստացաւ, որ այդ պատճառների մասին յետոյ կը խօսէ քաւոր Պետրոսի հետ։ Իսկ մենք ճանապարհից նոր եկած լինելով, և մանաւանդ ճաշի ժամանակ լինելով, այժմ սկսեցին հոգ տանել մեր հանգստութեան մասին։

Մեր ձիաները և սայլակը տեղաւորեցին՝ ես ինքս էլ չը հասկացայ թէ որտեղ. երևում էր, անտառի մէջ ուրիշ խորշեր ես ունէին։ Մեր իրեղէնները բերեցին խրճիթը։ Ճաշի սեղանը արդէն պատրաստ էր։ Ամենքը բոլորեցին սեղանի շուրջը, մեզ ամենապատուաւոր տեղը տալով։ Չը նայելով, որ նրանք բնակվում էին մի այնպիսի առանձնացած տեղում, լեռների մէջ, անտառների խորքում, բայց սեղանի վրա յայտնվեցան այնպիսի ուտելիքներ և այնպիսի ըմպելիքներ, որ այդ կողմերում հազուագիւտ էին։ Երևում էր, որ քաղաքների հետ խիստ յաճախ յարաբերութիւններ ունէին։

նա Ալէքսանդրապոլից տեսնում է թէ Թիֆլիսում «Մշակի» խմբագրատան մէջ ինչ է կատարվում։ Ես զարմանում եմ, թէ ինչպէս չէ ամաչում պարոնը այդքան սաստիկ կերպով ստել։ Ճշմարիտ է, որ անցեալ տարի այս ժամանակ ես Թիֆլիսում սովորում էի, սակայն այս տարի անձնական տրկարութեանս պատճառով և բժշկների խորհրդով, ես ստիպվեցայ առժամանակ հեռանալ Թիֆլիսից և վերադառնալ հայրենիքս։ Ուրեմն այս տարի ես ոչ թէ Թիֆլիսումն եմ, այլ Ալէքսանդրապոլում և այն նամակը ես գրեցի «Մշակին» ոչ թէ Թիֆլիսում, պ. Արծրունու խորհրդով, այլ Ալէքսանդրապոլի մօտիկ գիւղերից մէնում իմ անձնական խորհրդով և խոր համոզմունքով։ Պարոնը ինչպէս ուզեցէք ասում են, безбожно вретъ.

Պարոնը մի մեծ ռուս էլ է խօսում։ Նա ասում է թէ իբր ես Ալէքսանդրապոլի երիտասարդութեան կողմից թարգման եմ հանդիսանում «Մշակի» մօտ։ Ես իմ նամակումս Ալէքսանդրապոլի երիտասարդութեան անուն չեմ տուած։ Ես ասել իմ առհասարակ. «ընդունեցէք կրկին և կրկին շնորհաւորութիւն, յարգանք և անկեղծ սէր ձեզ համակրող հայ երիտասարդութեան կողմից»։ Այստեղ ես ոչ թէ միայն աչքի առաջ ունեմ Ալէքսանդրապոլի երիտասարդութիւնը, այլ առհասարակ «Մշակին» համակրող բոլոր հայ երիտասարդութիւնը։ Չը լինի պարոնը կարծում է թէ ես, որովհետև ալէքսանդրապոլցի եմ, ուստի միշտ պէտք է ալէքսանդրապոլցիների վրա մտածեմ։ Ինձ համար բոլորը մէկ է. ես ալէքսանդրապոլցու, Թիֆլիզցու կամ շուշեցու մէջ խտրութիւն չեմ դնում։

Ամենից ցաւալին այն է, որ «Մեղուի» պ. խմբագիրը, մեր կրօնի և եկեղեցու պաշտպան (sic) պուբլիցիստը, որ ինքը ուրիշներից պահանջում է ճիշտ ստորագրութիւն, հաւատում է այդպիսի ստախօս մարդկանց և իր լրագրի դարդակ ֆելէտոններում աջ ու ձախ դիպչում է այնպիսի մարդոց պատվին, որոնք գուցէ իրանից շատ և շատ ազնիւ ու բարոյական մարդիկ են։

Երուանդ Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Սղնախ, 24 փետրվարի

Ամսիս 10-ին ստացանք Ս. Պետերբուրգում բընակվող սղնախեցի մեծապատիւ կօլլէժսկի սեկրետար՝ Արտէմ Իվանիչ Սարգսեանցից նուէր յօդուտ մեր հայոց երկսեռ դպրոցների 228 բուբլի, որ հանգանակել է իր ծանօթներից։

Հոգաբարձութիւնս խորին շնորհակալութիւն է յայտնում յիշեալ պարոնի այդ օգտակար գործունէութեան համար, գովելով թէ նորա և թէ մեծ. նուիրատուաց մարդասիրական եռանդն և զգացմունքը, որ ունեն դէպի մեր չքաւոր ուսումնարանները։

Դարձեալ Ս. Պետերբուրգից առանձին նամակով ստացանք սղնախեցի Սարգիս Գօձեանցից 25 բուբլի։ Նոյն օրը տեղացիներից մի քանիսը, հետևելով նրանց բարի օրինակին, նոյնպէս նուիրեցին իրանց կարողութեան չափ գումարներ։ Այս բոլոր դրամական օժանդակութիւնը և թէ մեր ուսումնարանների անունով ընծայաբերած այլ և այլ իրեղէնները մի և նոյն ժամանակ ցուցակագրվում են նուիրատուաց ժապաւէնեալ մատեանի մէջ, որ կազմած ունի հոգաբարձութիւնս։

Հոգաբարձու՝ Եղիշէ ք. Տէր-Աստուածատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վարդանանց տօնի օրը, փետրվարի 24-ին, «Մշակի» խմբագիրը շնորհակալութեամբ ստացաւ լուսանկար պ. Տէր-Ղևոնդեանցից մի թանգագին ընծայ, Վարդան Մամիկոնեանի մեծադիր պատկերը, որ լուսանկարով հանված է։

—

Շնորհակալութեամբ ստացանք ՄՕՍԿՎԱՅԻՑ պ. Յ. Պարոնբէկեանցից նրա երաժշտական փոքրիկ հեղինակութիւնը «Минута скорби и печали» վերնագրով։ Հեղինակը մի հայ երիտասարդ է, Լազարեան ճեմարանի 6-րդ դասատան աշակերտ։ Այդ երաժշտական հեղինակութիւնը երիտասարդ երաժիշտը նուիրում է իր մօրը։ Տպված է Մոսկվայում Պ. Իւրգենսօնի մօտ։ Գինը 50 կոպէկ է։

—

Ռուս պրոֆեսոր պ. Մորդովցեվ, որ անցեալ ամառը փորձեց բարձրանալ Արարատ սարի վրա, ուղեկցութեամբ պ. պ. Զելինսկու, Կոկչայանի և Սիվօլօբովի, նկարագրում է այժմ իր ճանապարհորդութիւնը և Արարատի վրա բարձրանալը «Недѣля» շաբաթաթերթի աւելուածի մէջ, որ հրատարակվում է ամիսը մի անգամ տետրակներով։ Այդ յօդուածները տպվել են այդ հրատարակութեան այս տարվայ յունվար և փետրվար ամիսների տետրակներում։ Նկարագրութիւնը շատ հետաքրքիր և կենդանի է և յափշտակութեամբ է կարդացվում։

—

Կովկասեան հայոց Բ ա բ ե դ ո ր ծ ա կ ա ն ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել մեր լրագրում հետևեալ յայտարարութիւնը։ «Խորհուրդը ստացաւ սոյն փետրվարի 12-ին 300 բուբլի նուէր, ընկերութեանս անունով, պ. Անտոն Սողոմոնեան Քաղաքեանից ի յիշատակ իր հանգուցեալ հօր, արհեստաւոր Սողոմոն Մարտիրոսեան Քաղաքեանցի։ Նոյնպէս խորհուրդը ստացաւ և 100 բուբլ պ. Մարտիրոս Դուլգարեանցի ձեռքով ի յիշատակ հանգուցեալ Ագուլեցի Յարութիւն Մինասեան Շահնազարեանցի։ Խորհուրդը իր խորին շնորհակալութիւնը մատուցանում է յարգելի նուիրատուներին, որոնք իմացան իրանց հանգուցեալ սիրելիների յիշատակը արժանապէս յարգել»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ, փետրվարի 25-ին, ստացանք հետևեալ հեռագիրը։ «Կարդացինք մեծ համակրութեամբ Բաֆֆիի յօդուածը և շատ ցաւում ենք որ ինչպէս նա, այնպէս և դուք, պ. խմբագիր, ստիպված էք լինում, կորցնել ձեր թանգագին ժամանակը, պատասխանելու յետադէմ մամուլի ներկայացուցիչների ողորմելի գրուածներին։ Մենք կատարելապէս համակրում ենք «Մշակի» ուղղութեանը և մեծ ուրախութեամբ կարդում ենք Բաֆֆիի ըօմանները։ Կեցցէ Արծրունի, կեցցէ Բաֆֆի։» Ստորագրել են. Մելքեան, Աբիսողոմեան, Սալամբէկեան, Տէր-Յովհաննիսեան, Բարսեղեանց, Դաղայեանց, Յովհաննէսեանց, Տէր-Յարութիւնեան, Թաթօսեանց, Բալաեանց, Կոնստանտին Յովհաննէսեանց»։

—

Փետրվարի 25-ին, ուրբաթ օր, Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոս հասաւ Թիֆլիս, որտեղից նա ուղևորվելու է Էջմիածին այդտեղ կաթողիկոսական տեղակալի պաշտօնն ընդունելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 14 փետրվարի

Քիչ մ՚ալ մեր կաթողիկոսական խնդրոյն դանք։ Այդ խնդիրը կամայեկ կամայեկ կեփի։ Գործողք յախուռն գործելը անխոհեմութիւն կը սեպեն, և գուցէ այս անգամ Պոլսոյ բոլոր հայերին թերթերը ներդաշնակութիւն մը ունենան և շարժին մէկ ձեռաց հսկողութեամբ։ Մակար սրբազանը կաթողիկոս ընելու համար աշխատութիւններ պակաս չեն։ Իրաւ է որ քիչ մը դժուար է Ներսէս պատրիարքի և Խրիմեան սրբազանի վրայ վատ գրել, սակայն առջինին համար Պոլսոյ պատրիարք նալն անհրաժեշտ ըլլալն յառաջ պիտի քշեն, երկրորդին համար կամ կը լռեն կամ Վանի համար պէտք ըլլալը անշուշտ պիտի յայտարարեն։ Մակար սրբազանի համար նպաստաւոր ընդարձակ թղթակցութիւններ կը հրատարակուին, իսկ նպաստ գրութիւններն ընդհանրապէս զանց կը նուին։ Անցեալներն մի անհատական նամակ կար Երևանէն, որ անհատական ըլլալով շատ կարևոր տեղեկութիւններ կը պարունակէր, մասնաւորապէս Եղեռնի խնդրոյն համար և անպաստ կարծիքներ Մակար սրբազանի համար։ Հարկ դատեցինք այդ նամակը հոս հրատարակել, բայց եթէ կար սրբազանի համար եղած անպաստ ակնարկութիւններն արդեօք եղան։ «Մասիս» հաղորդեց թէ՝ Մակար եպիսկոպոս կաթողիկոսական տեղապահ ընտրուած է, բայց ցարդ դայս հաստատող պաշտօնական տեղեկութիւն մը չեկաւ պատրիարքարան։—Կաթողիկոսական խնդրոյ համար խատողք լռիկ պիտի աշխատին և վարպետաբար։ Անշուշտ խորէն սրբազան մեծ դեր մը կատարէ այս գործին մէջ։ Խորէն սրբազան թեկնածու կաթողիկոսական ընտրելի չենք կրնար նկատել։ Խնդիրը հոս է գտնել թէ՝ որու համար պիտի աշխատի։ Այս օրերս Բեթրսպուրգէն բանակցութիւն եկաւ Խորէն սրբազանի, պ. Պապի Գրիգորեանի ձեռքովը որ շատ ազդակցութիւններ և բարեբարութիւններ ունի Ռուսիոյ հայոց հետ։ Ազգի հաղորդուած տեղեկութեանց համեմատ գումարը պիտի յատկանայ միայն կաթողիկոսական խնդրոյ ծախուց համար։ Էջմիածնէն պաշտօնական հրաւէր չեկաւ մեր պատրիարքարանը թէ՝ երբ և ինչպէս պիտի ձեռնարկուի կաթողիկոսի ընտրութեան համար։ Մեր երեսփոխանք մտատանջութեան մէջ են և շատերը նամակներ պատրաստութիւններն կը տեսնեն։ Երեսփոխական ժողովը պիտի ուզէ որ Թիւրքահայոց քուէները այնպէս տրուին, ինչպէս տրուցան Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ։—Աւ այժմ այս խնդրոյն վրայ ալ զրելիք որևէ կարևոր բան մը չը կայ։

Մանկունի եպիսկոպոսին վրայ բաւական խօսուի և վերջի դէպքերն շատ կոտրեցին նրա վարկը, թէպետ և «Մասիս»-ի մէջ կը տեսնենք մերթ ընդ մերթ թղթակցութիւններ որոց նպատակն է սրբացնել եպիսկոպոսը։ Սակայն անոնք որ գիտեն թէ այդ թղթակցութիւններն որ դրամով ծարանէ եկած են, կը ժպտին. սակայն ընթերցողաց մեծամասնութիւնը ինչ գիտէ։ Մենք ժամանակ մը ձեզ գրեցինք մեր շրջմոլիկ թղթակցի մասին։

—Ցգեղին չեն փախցնի, պատասխանեց քաւոր Պետրոսը։

—Իր նամանը չը կար մեր գիւղում, մէջ մտայ ես։

—Իսկ մեր Գասպարը, հարցնում է մէկը իր եղբօր մասին։

—Նա հիմա գիւղի քահանան է։

—Մեր այգու խնձորենիները լաւ բերք տալիս են, հարցնում է քահանայի եղբայրը։

—Բերքը լաւ է, բայց պտուղը օտարն է ուտում։

—Ինչպէս։

—Քո պարտքերի փոխարէն տիրեցին։

—Ափսոս, այն խնձորենիները ես իմ ձեռքով էի տնկել, հէնց այն տարում, երբ հեռացայ մեր երկրից։

Խօսակցութիւնը ընտանեկան անցքերից անցաւ աւելի հասարակական գործերի վրա։

—Գիւղի տանուտէրը ով է հիմա։

—Աղա խանը։

—Այն քօռ անիրաւը դեռ գիւղը քանդում է։

—Բոլորը տանջված են նրա ձեռքից։

—Երկրի կառավարիչն ով է։

—Ն... խանը։

—Անիծածը կաշառքից կշտանալ չունի...

—Մենք էլ նրա համար ենք վատակում..,

—Փողի տոկոսը քանով էր։

—Թումանին ամիսը մէկ կուտ։

Վերջին խօսքը սարսափ ձգեց շատերի վրա։ Նրանք այսպիսի ծանր տոկոսներով պարտքեր ունէին իրանց հայրենիքում։ Ամուսնի պարտամուրհակը կնոջը փոխել էին տալիս, և ամեն տարի տոկոսը բարձրանում էր դրամագլխի վրա։ Վաշխառուն հարստահարում էր դրանց, իսկ դրանք հարստահարում էին անմեղ, միամիտ մարդիկներին։

Ընդհատված խօսակցութիւնը շարունակվեցաւ։

—Լուսին ինչ է անում։

Դա մեր գիւղի նշանաւոր գեղեցկուհիներից մէկն էր։

—Նա հիմա լաւ բաղար ունի... պատասխանեցի ես։

—Ինչպէս։

—Ջէս հասկանում...

—Ամօթ նրա տղամարդին, մի այնպիսի սիրուն կնոջը կարելի է տասն տարիներով անտէր և քաղցած թողնել, ասաց նրանցից մէկը։

Կարծես, իրանց կնիկները տասն տարիներից աւել չէր, որ անտէր ու քաղցած էին մնացած։

Մի ուրիշը հարցրեց.

—Մեր սև շունը մնում է։

—Չէ, կեանքը տուեց քեզ։

Այդ լուրերը, որ քաւոր Պետրոսը հաղորդեց իր սովորական սառնասրտութեամբ, յարուցին ոմանց մէջ ուրախութիւն, իսկ ոմանց մէջ տրտմութիւն։ Ինձ խիստ զարմանալի էր թուում, երբ նկատում էի, որ այդ հոդով և սրտով քարացած մարդիկն էլ զգացմունք ունեն, կարող են ուրախանալ և տրտմել։ Բայց շուտով ամեն ինչ մոռացվեցաւ, իբր թէ ոչինչ չէին լսել։

Ես չէի կարողանում զսպել իմ վրդովմունքը, երբ նայում էի այդ անփոյթ, անհոգ մարդկանց վրա, որոնք օտարութեան մէջ մոռացել էին ամեն ինչ, որ իրանց համար ամենաթանգագինն էր։ Ունենալ կին, որդիներ, ազգականներ, և նրանց երկար տարիներով թողնել անխնամ, գերի թուրքերի և պարսիկների ձեռքում, իսկ ինքը անհոգանալ պանդխտութեան մէջ,—դա գերդաստանի հօր ամենասարսափելի անտարբերութիւններից մէկն է։ Այդ մարդիկը, մտածումէի ես, ամենևին գութ չունեն, նրանց մէջ մեռել է ծնողական սիրտը. նրանց զգալի չէ ոչ երեխայի ժպիտը և ոչ կնոջ արտասուքը,—երկուսն էլ կատարվում են նրանց աչքերից հեռու...

Մինթ ես էլ նոյն գրութեան մէջ չէի գտնվում...

Ես շատ լաւ էի հասկանում, որ աղքատութիւնն էր ստիպել դրանց թողնել իրանց հայրենիքը, թողնել իրանց ընտանիքը, և նոյն աղքատութիւնը իմ ձեռքս տուեց պանդխտութեան գաւազանը։ Հայրենի երկրում չը կարողանալով գտնել թայթիել իրանց ապրուստը, նրանք հարկադրվում էին օտարութեան մէջ բախտ որոնել։

Արդար վատակի նրանք ոչ միայն սովոր չէին, այլ և անընդունակ էին. չը գիտէին որ և է արհեստ, չէին վարժված տոկուն աշխատանքի։ Նրանց միտքը, նրանց ընդունակութիւնները կանաչաբար սրվել, կատարելագործվել էին խաղերի մէջ, այն չափով, ինչ չափով զարգացել էր նրանց մէջ արծաթի որսալու անախորժակը, որի համար ներելի էին համարվում ամեն միջոցներ, որքան և անազնիւ լինէին։

Մի անգամ քաւոր Պետրոսը խիստ իրաւունքի կերպով նկատեց, թէ «արծաթը աղի ջուրի պէս է, քան խմես, այնքան կը ծարաւես»։ Նոյն ծարաւը զգում էի և ես։ Ահա, թէ ինչ էր, որ ինձ առժամանակ բաժանեց Նէնէից և ձգեց այդ բարոյական հասարակութեան մէջ։

Ինձ բոլորովին զզուելի էր թուում այդ նոր դիրքը։ Զարմանալի է, թէ որքան վայրենանում է մարդը լեռների և անտառների առանձնութեան մէջ. կերպարանքը, բնաւորութիւնն անգամ ամենակոպիտ ձևեր են ստանում։ Նրանց կոշտացած դէմքը, խառնուած մազերը, երեսների անտարբերութիւնը, ճչմարիտն ասած, ինձ սարսափ էր բերում։ Թէև մեզ, որպէս իրանց հայրենակցին, ցոյց էին տալիս հիւրասիրութիւնի բոլոր պատրաստականութիւնները։

Ամենազարշելին այն էր, որ այդ մարդիկը խաղաթղթի սև փոշու տակ ծածկված, կատարելապէս էին մի այլ աւելի սև արհեստ...

Ո՞վ մտցրեց իմ մէջ այդ փոփոխութիւնը։—Պարտական էի Նէնէին, որ զարթեցրեց իմ մէջ զզուանք զէպի այդ մարդիկը, և ստիպեց դեղեցիկը ու լաւը...

(Կը շարունակվի)

«կովկասեան նամակների», «Պաթումի թղթակից» և այլն ստորագրութիւններով թէրճեմանի-էֆքարի մէջ կը գրէր ինչ որ իրեն կը հրամայէր Մանկունի եպիսկոպոսը: Այդ անձն է որ այժմ «իբր պատական թղթակից», «ռուսահայ աշխատակից» —«մասնաւոր նամակէ կը քաղենք» և այլն եղանակներով կը թղթակցի «Մասիս»-ի, «Թէրջեմանի» և «Փունջի»: Աւելորդ է ըսել որ յատակագիծ կայ և ըստ այնմ կը գրէ:—Այդ անձը մեր վրայ յարձակելով թէրջեմանի մէջ կըսէր թէ զիս ով կը ճանչնայ.—ամենքս ալ կը ճանչնանք: Այս անձը մի քանի շաբաթ առաջ սկսաւ ինքն ալ կամաց կամաց իր գոյքը հոս փոխադրել: Անցեալները իրկից ծրարներ որոց մէջ էին ֆրանսիական ոսկի, օսմանեան ոսկի, մաճառ ոսկի և թուղթ քաղաքն: Ինքն մտադիր է Գասը-զիւղ տուն մը գնել: Կողոպտեցէք, կողոպտեցէք:—Այդ անձը կատաղած և մոլեղին մեզ կը հարցնէր թէ ինչպէս կրցեր ենք իր նամակը տեսնել և այս մասին հաշիւ կը պահանջէր: Զէր ուրանար թէ այդպիսի նամակ չը կայ, այլ կուզէր որ իրեն ալ հաղորդէինք թէ ինչպէս զայն կարդացեր ենք: Խելօք արարած. եթէ քեզի հաղորդենք այս, մեզի ինչ կը մնայ: Կուզես նոր ապացոյց որ մեր աչքէն չատ բան չը վրիպեր: Երբ եղբօրդ նամակ գրելով իրեն խրկեցիր այդ ծրարներն և ի մէջ այլոց տեղեկութեանց կաթողիկոսի գերեզմանին նկատմամբ կը յայտարարէիր նաև թէ «Մանկունի սրբազանը քիչ առենէն Պոլիս կուգայ և ի մեր տուն պիտի գա՛նի:» Այս անձն էր նաև որ Վահան վարդապետի նամակ գրելով մի քանի ամիս առաջ կըսէր թէ. «Գու որ այնքան լաւ գիտես փողոցի լեզուն, ինչու այդ Հայկակին փողոցի լեզուով չես պատասխաներ:»—Ալ մի ջանար ինքզինքդ պարակել:—Էջմիածին որ չը կրցաւ ձմրան մի քանի ամիսը պարակել քանի մը տղայներ, այսպիսի վարձկաններ պահելու համար ստակ ունի: Ինչ վիճակի մէջ ենք, որ մեր ամենէն մեծ խընդիրները այսպիսի կեղտոտ անպիտան անձնաւորութեանց ղրչին ներքև պիտի լուսաբանուին: Այս այն տխուր անձն է որ օր մը նշանաւոր կերպով մատնեց իր ազգը: Երբ տակաւին խորհուրդներ կար ազգին մէջ պատգամաւորներ խրրկել Եւրոպա ազգային դատին համար, երբ նոր սկսած էին հայ երիտասարդք դիմելով եւրոպայի թղթակցաց խնդրել անոնց աջակցութիւն հայկական խնդրոյ համար, ահա այդ պարոնը կը հրատարակէ յանկարծ մի չաբաթ երեկոյ ընդարձակ յօդուած մը, յորում թիւրք կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ այս դէպքերուն վրայ: Մի առ մի կը գրէ թէ ինչ խորհուրդներ կան ազգին մէջ հայկական դատը Եւրոպիոյ ուշադրութեան յանձնելու համար, թէ ինչպէս հայ երիտասարդները սկսած են յաճախել եւրոպական թղթակցաց մօտ: Այս յօդուածին ազդեցութիւնը մեծ եղաւ: Դեռ այն ժամանակ հայկական խնդիր բառը չը կար, թիւրքերը արթնցան, այդ յօդուածը թարգմանուելով նախարարաց ներկայացուցին: Անմիջապէս ոստիկանութիւնը պատրիարքարան եկաւ և բացատրութիւններ խնդրեց: Իրարանցումը նշանաւոր էր. լրագիրք սկսան նշաւակել այս մատնութիւնը և հեղինակը մատնիչ անուամբ մերկրել. հայ-դրական ընկերութիւնը, որոյ անդամ էր այդ յօդուածի հեղինակը, անմիջապէս արտաքսեց զնա իր ծոցէ: Ի՞նչ էր զաղտնիքը այդ յօդուածը գրելուն: Հարցնելու հարկ կայ, ինչու այժմ կը գրէ: Այս անձն էր որ անդադար կը լրտեսէր և կը գրէր ինչ որ ազգին մէջ զանար և ասոր համար էր որ 4—5 տարի առաջ գրեցինք «Մշակ»-ի թէ քանի որ այսպիսի ապիրատներ կան մեր մէջ, չէ կարելի ունենալ ազգային գաղտնիք մը:—Այս տեսակ արարածները որք ինքզինքնին ծախած են և քանի մը մէճեղով կաշխատէին «մամուլ»-ի, այս տեսակ արարածները խմբագիր կըլլան Էջմիածնի պաշտօնական թերթին, Էջմիածնայ կարծեաց թարգման կը հանդիսանան, իբր ներկայացուցիչ Ռուսաստանի հայոց կը զբրեն: Մինթէ այլ ես Ռուսաստանի մէջ գրող հայ չը կայ, ինչու այսպիսի վայրկեաններու իրենց ձայնը լսելի չեն ըներ. ինչու չեն հրապարակ գար և վերջ տար այսպիսի խայտառակութեանց: —Կաթողիկոսական խնդիր մը ունինք որ կենսական խնդիր մ'է մեզ համար և այս խնդրոյ մէջ թիւրքիոյ հայք մեծ դեր ունին խաղալիք ու գործ թոյլ տուած էք որ մեզ խարհուրդ տուողները նենգաւորներն ըլլան:

Պ. Աբրահամ Այվազեանի գործէն ի վեր Գէորգեան ճեմարանի համբաւը կոտրած է հոս: Ճեմարանի աշակերտներէն նամակներ կուգան յորում կանխիձեն այն օրը որ իրենց ոտքը ներս դրած են ճեմարանէն և երեկ կուտան այն տղայոց որ Պոլիս վերադարձան: Գիտեմ ծնողքներ որ շատ մտատանջութեան մէջ են և կը սպասեն գարնան առջի օրերուն իրենց տղայքը բերել տալու համար: Հոս կը զարմանանք թէ ինչպէս կարելի եղած է որ այդքան գումարներ վատնելով այդպիսի ճեմարան մը կառավարեն: Անցեալները «Մասիս» բառախաղ ընելով կըսէր թէ ճեմարանը նահապետական վիճակի մէջ է: Այս օրերս պ. Մարկոս Աղաբէգեանց մի քննադատական յօդուած հրատարակեց հանդուցեալ կաթողիկոսի վրայ, այդ քննադատութեանց մէջ խաչոր տեղ մը կը բռնէր ճեմարանի գոյութիւնը: Պ. Մ. Աղաբէգեան կուզէր հաստատել թէ յիմարութիւն էր այդպիսի տեղ մը ճեմարան հաստատել և թէ վնասակար էր ազգին որ չլսելով ուրիշ դպրոցներու ոյժը այդ ճեմարանը ուզեն զօրացնել: Անցողաբար սա ալ ըսենք թէ պ. Աղաբէգեանի այդ կարևոր յօդուածի նշանաւոր կէտերն ուրիշ բան չէին բայց եթէ համառօտութիւն մը «Մշակ»-ի մի քանի տարիներու քննադատութեանցը ընդդէմ Էջմիածնայ վարչութեան:—

Քանի որ ճեմարանը այսպիսի վիճակի մը մէջ կը նկարագրուին, զոհ ըլլալու ենք որ տղայները չընդունուեցան: Մի քանի անձեր որք ի մօտոյ յարաբերութիւն ունին ետ դարձող տղայոց ծնողքներուն հետ, մեզմէ խնդրեցին որ իրենց կողմէ խորին շնորհակալութիւններ յայտնենք ամեն անոնց որք այնքան մարդասիրութեամբ վարուեցան իրենց տղայոց հետ և օգնեցին անոնց: «Մասիս» արտատպած էր այդ տղայոց նպաստաղներուն ցուցակը: Պ. Այվազեանի խնդիրն ալ այնպէս դեռ մնացեր է: Այս շաբթու Աղդայէն ժողով կայ, հաւանօրէն այդ խնդիրն ի նկատի առնուի:—Եթէ Աբրահամ Այվազեանի պատիժ մը տալ հարկ է, չենք դիտեր թէ ետ բերած տղոց համար ըլլալու է թէ ճեմարանի մէջ աշակերտները ընդունել տուած ըլլալուն համար:—

Այսօր այսչափով կը բաւականանանք թէպէտ կան դեռ գրելու նիւթեր: Մտադիր ենք այս տարի ծանօթացնել ձեզ նաև Պոլսոյ գրական շարժումը որոյ վրայ կարծեմ թէ դաղափար մը չունիք: Այս շարժումը մեծ բան մը չէ, բայց ինչ որ ալ ըլլայ տեղեկութիւն ունենալու է: Երբ ազգային բոլոր հարցերն համառօտաբար կը ծանօթացնենք, երեսի վրայ չը թողունք մատենագրական խնդիրներն ալ: Մատենագրութիւնն ալ ազգի մը զարգացման նշանակներէն մին է: Ուրեմն յաջորդ նամակաւ ի մէջ այլոց զբաղենք նաև ժամանակակից գրական խնդիրներով ալ:

Հայկակ

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երաժիշտ Բիթհաբդ Վագնէրի մահվան առիթով մի դիտական կազմել է մի ցուցակ թէ ամբողջ աշխարհի ամենաերևելի երաժիշտները ինչ հասակումն են մեռել: Բերում ենք այդ ցուցակից ամենայայտնի և ամենաերևելի անունները: Ֆրանց Շուբերտ վախճանվել է 31 տարեկան հասակում, Բեթհովենի 33 տարեկան հասակում, Մօցարտ 35 տարեկան, Մէնդելսոն 38, Վէբեր 39, Շուման 46, Դոնիցէտտի 49, Բէթովէն 56, Հալեվի 62, Բախ 65, Կրէյցեր 67, Բիթհաբդ Վագնէր 69, Ֆլոտով 70, Սպոնտինի 72, Մէյերբեր 72, Գլուվ 73, Հէնզլտ 74, Շպոր 75, Բոսսինի 76, Հանդէն 77, Կերուբինի 81, վերջապէս Օբեր վախճանվել է 87 տարեկան հասակում:

* *

Ինչպէս երևում է ռուս սոցիալիստ իշխան Կրապոտկին, որին ֆրանսիական դատարանը Լիոնում դատապարտել է հինգ տարվայ բանտարկութեան, բաւական մեծ նշանակութիւն ունի գիտութեան մէջ, մանաւանդ, ինչպէս ասում են, մաթեմատիկայի մէջ, որովհետև, ինչպէս հաղորդում են լրագիրները, Անգլիայի ամենանշանաւոր գիտնականները և պարլամենտի անդամները այս օրերս խնդրագիր ներկայացրին ֆրանսիական հանրապետութեան նախագահ Գրեվիին, որով խնդրում են ներել Կրապոտկինին և ազատել նրան բանտից: Կարծում են որ այդ խնդիրքը յաջողված կը լինի:

* *

Մի գերմանացի տեխնիկ գտաւ լուսաւորող գազ մարդկային արտաթորութիւններից պատրաստելու մի նոր միջոց, տաքացնելով այդ արտաթորութիւնները բեռորդի մէջ: «Der Techniker» գերմանական լրագիրը հաղորդում է որ Բրէսլաու քաղաքի մեծ հիւրանոցներից մին արդէն սկսել է լուսաւորվել այդ գազով: Երևում է որ լուսաւորութեան այդ միջոցը սաստիկ էժան է նստում, շատ խնայողական է ուրեմն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Ռուսաց մի բուբլ Լօնդօնի վրա արժէ $24^1/_6$ պէնս, ռուսաց 100 բուբլ Համբուրգի վրա արժէ $205^1/_4$ մարկ, Փարիզի վրա $253^3/_8$ ֆրանկ: Ոսկի 8 ը. 20 կօպէկ: Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 219 բուբլ, երկրորդ $212^3/_4$ բուբլ:

ՄՕՍԿՎԱ, 23 փետրվարի: Թագադրութեան համար Կրեմլի մէջ Բլագովեշչենսկի և Արխանգելսկի մայր-եկեղեցիների մէջ կառուցվում են տեղեր այցելուների համար:

ԿԱԶԱՆ, 23 փետրվարի: Սուտ լուրերի պատճառով քաղաքային բանկը յանկարծակի քննութիւն է պահանջում: Նախկին ուսանող Վ. օրօնցով դատապարտված է աքսորի Տօբոլսկի նահանգը:

ՋԱՑՍԻՆ, 23 փետրվարի: Պեկինի ռուսաց դեսպանի առաջարկութիւնների պատճառով Կօբդինի նահանգապետի վերաբերութեամբ, որ արգելք էր դնում սահմանների որոշմանը, հրամայված է նրան հեռացնել: Նրա յաջորդին հրամայված է այնտեղ հասնելուն պէս, որ փետրվարին կը լինի, վերջացնել սահմանական խնդիրը այնպիսի արագութեամբ, որ ցանկալի է երկու կառավարութիւնների համար:

ԲԵՐԼԻՆ, 23 փետրվարի: Ուէլսի իշխանին գերմանական զօրքերի Ֆելդմարշալ նշանակելը համարում են Գերմանիայի և Անգլիայի բարեկամութեան մի ապացոյց: Պատերազմական մինիստր նշանակված է գեներալ Բրօնզիր-Շելենդորֆ: Ցնտեսական խորհուրդի հիմնելը վերջնականապէս մերժված է պատգամաւորների ժողովից:

ԲՈՒԻՍԱՐԵՍՏ, 23 փետրվարի: Ամրոցներ կառուցանելու համար պատգամաւորների ժողովը 15 միլիոն նշանակեց: Բրատիանօ յայտնեց, որ այդ կարգադրութիւնը բացառապէս պաշտպանողական է Ռումինիայի չեզոքութիւնը ապահովելու նպատակով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 փետրվարի: Երկաթգծային ինքնավարութեան տասնամեակի օրը կարգացվեցաւ Դումայի մէջ Ստասիւլեվիչի կազմած հաշիւը քաղաքային վարչութեան տասնամեայ գործունէութեան մասին:

ԽԱՐԿՕՎ, 24 փետրվարի: Պրօկուրօրի օգնականը բողոքեց Ֆիլիպպովի գործի մասին դատավճռի դէմ, գտնելով, որ Ֆիլիպպով աւելի մեղմ է պատժված, քան թէ օրէնքն է պահանջում:

ԼՕՆԴՕՆ, 24 փետրվարի: Գլադստոնի խորհրդակցութիւնները Ֆրանսիական մինիստրների հետ ցանկալի հեռանքներ չունեցան եգիպտական հարցի վերաբերութեամբ: Ֆրանսիան պահանջում է ունենալ Անգլիայի չափ ազդեցութիւն Եգիպտոսի վրա:

Կ. ՊՕԼԻՍ, 24 փետրվարի: Պետութիւնների դեսպաններին պատուիրած է միջնորդել բօլգարական հարկի հարցի մէջ, որ ընկնում է այդ իշխանութեան վրա ի հաշիւ Թիւրքիայի պետական հարկի:

ԿԻԵՎ, 24 փետրվարի: Պայմանների կայացնելը վերջանում է փետրվարի 27-ին:

ԱՍՏՐԱԽԱՆ, 24 փետրվարի: Տաք եղանակ սկսվեցաւ: Սառուցը թոյլ է:

ՏՕՄՍԿ, 24 փետրվարի: Շատ տեղերում թագադրութեան հրովարտակը ստանալուց յետոյ աքսորվածները մաղթանքներ են կատարում թագաւորի երկարակեցութեան համար:

ԲԵՐԼԻՆ, 24 փետրվարի: Ուէլսի իշխանին գերմանական զօրքերի Ֆելդմարշալ նշանակելու մասին լուրը ճիշդ չէ: Իշխանը անդրլիական մարշալի աստիճան է ստացել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Մարտի 1-ին ոչնչացնվում է պետական դիւղացիների հողային կազմակերպութեան համար նշանակված ժամանակաւոր բաժինը իբրև ինքնուրոյն հիմնարկութիւն և միացնվում է պետական կայքերի մինիստրութեան ընդհանուր գործերի բաժնին:

ԿԻԵՎ, 24 փետրվարի: Պայմանները վերջանում են: Նրանք ազդեցութիւն ունեցան ճարխալի գնի վրա:

ՓԱՐԻԶ, 24 փետրվարի: Այսօր ինվալիդների տան առաջ հաւաքվեցան բազմաթիւ բանւորներ, որոնք հաց և աշխատանք էին պահանջում: Ժողովը մասամբ անիշխանական բնաւորութիւն ուներ: Հաւաքվել էին 5000 մարդ, որոնց թիւում և հետաքրքիր այցելուներ: Պոլիցիան ցրվեց ամբոխին և մի քանիսին կալանաւորեց: Լուիզա Միշելի փորձը Ելիսեան պալատի առաջ ցոյց անելու համար չաջողվեցաւ: Իրլանդացի Բայրն, որ կալանաւորվեցաւ այստեղ, կասկածված լինելով Ֆենիկս-պարկի սպանութեան մէջ սրձակված է և չի յանձնվի Անգլիային:

ՀՌՕՄ, 24 փետրվարի: Ռուսաց հաւատարմատար Բուտենիեվ շնորհաւորեց այսօր պապի գահ բարձրանալու օրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Այսօր թագաւորի ծննդեան տօնի առիթով քաղաքը զարդարվեցաւ դրօշակներով: Խակիեվկի մայր-եկեղեցու մէջ բարձրաստիճան անձանց ներկայութեամբ մաղթանք կատարվեցաւ: Պալատի մէջ ընդունելութիւն չը կար: Փետրվարի 24-ին վախճանվեցաւ պալատական օբեր-գօֆմէյստեր Վիկտոր Ալէքսանդրովիչ Բիբիկով: Տուրգէնիեվի առողջութեան մասին լուրերը վատ են: Նա նեվրիտ ունի: Նիկոլաեվից հաղորդում են, որ արտասահմանից հացի պահանջը մեծանում է: Դեռ շատ չեն բերում: Գները բարձրանում են: Գարնանը լաւ գործերի են սպասում:

ՓԱՐԻԶ, 26 փետրվարի: Երեկ երեկոյեան ինվալիդների տան առաջ նորից սկսվեցաւ բանւորների ժողովը և բացարձակ ապստամբութեան բնաւորութիւն ստացաւ: Հեծելազօրքը յարձակում գործեց ապստամբների դէմ: Մի քանի մարդ վիրաւորված են: Ապստամբները կողոպտեցին հացթուխներին: Շատերը կալանաւորված են, կարգապահութիւնը վերականգնված է:

ԲԵՐԼԻՆ, 27 փետրվարի: Կայսր Ալէքսանդրի անուան գվարդիայի գրենադերների գունդի օֆիցերները Ռուսաց Կայսրի ծնընդեան օրը հանդիսաւոր ճաշ տուին, որին ներկայ էին ռուսաց դեսպան Սաբուրով և զինուորական հաւատարմատար իշխան Դոլգորուկի: Երեկոյեան դեսպանը պաշտօնական ընդունելութիւն ուներ:

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի: Երէկ Ռուսաց Կայսրի ծննդեան տօնի առիթով քաղաքը զարդարված էր դրօշակներով: Եկեղեցիների մէջ մաղթանքներ կատարվեցան: Բօլգարական իշխանը հանդիսաւոր ճաշ տուեց:

ՓԱՐԻԶ, 27 փետրվարի: Լուիզա Միշել և ապստամբութեան մի քանի ուրիշ առաջնորդներ կալանաւորված են: Միջոցներ են գործադրվում նոր ցոյցեր անելու դէմ:

ԲԵԼԳՐԱԴ, 27 փետրվարի: Եկեղեցական դժուարութիւնները սուր բնաւորութիւն ստացան: Շաբացի և Նիշի եպիսկոպոսները հրաժարական տուին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի: Երէկ Մեծ և Ալէքսանդրեան թատրոնների մէջ բոլոր տեղերը ձրիաբար տուած էին միջնակարգ ուսումնարանների աշակերտներին և աշակերտուհիներին: Մեծ թատրոնի մէջ ներկայ էին թագաւորը և թագուհին, ո-

րանք անտրակտի ժամանակ յանկարծ մտան դահլիճը։ Բաղդաւորված երիտասարդութիւնը ամեն տեղ ոգևորված ուրա էր կանչում։ Սուտ լուրեր հերքելու համար, իբր թէ հոգևոր հիմնարկութիւնները մեծ գումարներ են կորցրել Սկոպինի բանկի մնանկանալու պատճառով „Прав. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ 1865 թ. օգոստոսի 1-ից մինչև 1882 թ. սեպտեմբերի 16-ը հոգևոր հիմնարկութիւնները բանկին տուել են 991,224 ր։

ՓԱՐԻԶ, 27 փետրվարի։ Վերջին անկարգութիւններին մասնակցողներից 7-ը դատապարտվեցան կալանաւորման ութ օրից մինչև երեք ամիս ժամանակով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Այսօր Բաղէն-Բաղէնում, առաւօտեան ժամը չորսին, վախճանվեցաւ կանցլեր, իշխան Գորչակով։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ ՊԱՍԻ առաջի 10 պատուիրողներին կը լինի..... 30/00 գրքում
երկրորդ..... 20/00 —
երրորդ..... 10/00 —
Գանովսկի փողոց տ. № 10-ը
Կանանց դերձակ Գ. և Շ. Անեանց
(1) 1—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ՔԱՆԴԱԾ ՕԶԱԽ
կօմեդիա երեք արարուածով
Հեղինակութիւն
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 50 կոպէկ։
Վաճառվում է ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և ԿՈՎԿԱՍԵԱՆ դրավաճառանոցներում։
4—6

ՌԱՖՖԻ
ԿԱՅՓԵՐ
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ
ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ
Գիրքը բաղկացած է 546 երեսներից և աւելի մեծ գիրք ունի, քան թէ հեղինակի միւս հրատարակութիւնները։
Թիֆլիսում վաճառվում է՝
„Մշակի“ խմբագրատանը.—„կենտրօնական գրավաճառանոցում“—„Կովկասեան գրավաճառանոցում“—պ. Շահվերդեանի պավիլիօնում—պ. պ. Շահինեանցի և Տէր-Յովսէփեանցի ծխախոտի մագազիններում։
Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ. Редакція "Мшакъ". А. МЕЛИКЪ-АКОПІАНУ.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ
„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“
Երրորդ տարուայ դասագիրքը
Երկրորդ տպագրութեամբ։
Գինը 40 կոպէկ է։
Գումարով առնողներին զիջումն կը լինի։
Ծախվում է կենտրօնական գրավաճառանոցում։

ՁԱՐԱԲԱՂԻ
ԱՍՏՂԱԳԻՏԸ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ
ՊԼԱՏՕՆ ԶՈՒԲՕՎԻ
ԹԱՐԳՄԱՆԵՑ ՐԱՖՖԻ
Թիֆլիսում գինն է 1 ր. 20 կ.
Թիֆլիսից դուրս . . . 1 ր. 50 կ.
Վաճառվում է
„Մշակի“ խմբագրատանը. „Կենտրօնական գրավաճառանոցում.“ Զաքարիա Գրիգորեանի „Կովկասեան գրավաճառանոցում.“ պ. Շահվերդեանի գրավաճառանոցում. պ. պ. Շահինեանցի և Տէր-Գրիգորեանցի ծխախոտի մագազիններում։

ՐԱՖՖԻ
ԽԱՄՍԱՅԻ
ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Գիրքը բաղկացած է 467 երեսներից
Թիֆլիսում վաճառվում է՝
„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրօնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաձեանցի ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում։
Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ տիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։
ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
РАФФИ.

ԵՐԿԱԹԷ
ԱՆԳԼԻԱԿԱՆ

ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ
Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ր., մահճակներ ծովային խոտով լցված 6—9 ր. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներով, երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թիեր, տաղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, ըէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբօմներ, կօնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։
39—100

ԳԱԼԵՐԷԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՊՕՐՑՕՎԱՑԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.
СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ
Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՕՆԷՔ ֆաբրիկայի ՄԷԲԵԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, Բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՉԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

ՎԻԷՆՆԱՑՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
L'ORIENTAL
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։
„Ժուրնալ դ'Օրիան“ գաղարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր լրագիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ։
Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում գինը հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ
Գտնվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ հետևեալ մագազիններում. Գ. Մ. կօպաձէի, Ս. Անիեվի, Ա. Պ. Ակօպօվի, Վ. Ֆ. Սիտօվի, Ե. Ա. Եղիազարօվի, Գ. Ա. Բաեաղչեվի, Ս. Ա. Ծովիանօվի, Յ. Ա. Բաբանօսօվի, Յ. Ի. Գուրգենօվի, Ի. Ա. Եւանդուլօվի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի միւս բոլոր քաղաքներում։
3—24 (1—15)

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԸ
ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“
Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ դիպվածներում։ ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։
Պէպսին „Բուդօ“ ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարհահանդիսում 1867 թ. ՎԻԷՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։
Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.
Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։
Դէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիֆֆակի և այլ դեղատներում։

КЕЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.
25—50

ՌԱՖՖԻ
ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ
Վաճառվում է Թիֆլիսում
„Կենտրօնական“ և Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան“ գրավաճառանոցներում. Շահվերդեանցի պավիլիօնում, Տէր-Յովսէփեանցի և Շահինեանցի ծխախոտի խանութներում։
Հրատարակչից առնողները քանակութեան համեմատ օգտվում են զիջումով։
Հասցէն՝
Тифлисъ. Оаннесъ Степанянцъ.
3—5

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ. ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՓՐԱՑՈՒՄՆ
(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.
Համեմատեցէք թէյ

1 ր. 10 կ. թէյի հետ		ամենատեղ	1 ր. 30 կ
1 „ 20 „	. . . . .	1 „	60 „
1 „ 40 „	. . . . .	1 „	90 „
1 „ 60 „	. . . . .	2 „	20 „
1 „ 80 „	. . . . .	2 „	50 „
ամենաբարձր 2 ր.	. . . . .	3 „	——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկօլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, պալմերի բիսկվիտների, Բազրի կոնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնրի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկլինի ամաններ, կոմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբօմներ և այլն և այլն։
73—100

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Февраля 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.